ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

15 մայիսի 2023թ. թիվ 432

Ի.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, Ն.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, Ս.ԱՍՐՅԱՆԻՆ,
Հ.ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Իրինա Մարտիրոսյանին, նույն բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանին և ավագ մասնագետներ Սվետլանա Ասրյանին, Հասմիկ Անդրեասյանին և Անի Ղազարյանին ս/թ մայիսի 15-ին մեկ օրով գործուղել ք.Գյումրի՝ վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

15/05/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2023թ. մայիսի 15
ք.Վանաձոր